ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ **Պատմություն**

Մասնակից՝ Թորոսյան Լուսինե Սամվելի

Ղեկավար՝ Սաֆարյան Արմինե

Հետազոտության թեման՝ **ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ**

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն 2

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ.1 ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

1.1 Մեթոդական միավորման կառուցվածքն ու գործառույթները.....5

1.2 Պատմության ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդական միավորումների աշխատանքներին……10

Եզրակացություններ 16

Առաջարկություններ.....16

Օգտագործված գրականության ցանկ 17

Հավելվածներ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողն այսօր խիստ պահանջկոտ է: Շատ հաճախ ուսուցիչը ստիպված է լինում ընդհատել դասի ընթացքը, որպեսզի պատասխանի սովորողի կողմնակի հարցին, բավարարի նրա հետաքրքրությունը: Ուրեմն կարիք կա, որ դասի ընթացքում ուսուցիչն անդրադառնա այնպիսի հարցերի ևս, որ շահագրգռի ու հետաքրքրի սովորողներին: Կարծում ենք, որ դասի ժամանակ ճիշտ ու կառուցողական իրավիճակների ստեղծումը կապված է ուսուցչի հմտության ու մասնագիտական պատրաստվածության հետ: Ուսուցչի համար զարգանալու, փորձի փոխանակման կարևոր աղբյուր է գործընկերների հետ համագործակցումը, որ երկուստեք օգնում է ուսուցիչներին զարգացնել իրենց մասնագիտական կարողունակությունները: Իսկ արհեստավարժ ու բանիմաց ուսուցիչը կարողանում է հետաքրքրել սովորողին, կառավարել դասն ու սովորողների վարքը:

Մեթոդական միավորմումները ուսուցիչներին տալիս են համագործակցելու, փորձի փոխանակման, հետաքրքիր ու նորարարական մտքեր քննարկելու հնարավորություն: Դպրոցում գործող խորհրդակցական ամենաստորին մարմինները առարկայական մեթոդական միավորումներն են: Մեթոդական աշխատանքը դպրոցում մի մանկավարժական համակարգ է, որի աշխատանքը հիմնված է ուսուցիչների համագործակցության վրա՝ նպատակ ունենալով ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպել ավելի նորովի ու համակարգված: Մեթոդական միավորումների անդամներեն ուսումնական հաստատության ուսուցիչներն են, ովքեր իրենց նվիրված աշխատանքն ուղղում են դեպի դպրոցի ու սովորողների շահերը:

Աշխատանքն այստեղ ուղղված է ուսուցիչների մասնագիտական որակների, մեթոդական գիտելիքների բարձրացմանը: Միավորման ներսում շատ կարևոր է

յուրաքանչյուր ուսուցչի անհատական դերկատարումը: Կարծում ենք՝ այս օղակի արդյունավետ աշխատանքից շատ բան է կախված՝ այդ թվում կրթության որակը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է զարգացող աշխարհում ուսուցչի համար սահմանված նոր պահանջներով, որոնց բավարարման մի յուրահատուկ եղանակ է աշխատանքը դպրոցի մեթոդական միավորման շրջանակներում, որտեղ ուսուցիչը, ծավալելով զանազան բնույթի աշխատանքներ, զարգացնում է իր մանկավարժական որակներն ու ձեռք բերում բազմաթիվ անհրաժեշտ ու պահանջված կարողունակություններ:

Հետազոտության նպատակը: Կարևորել մեթոդական աշխատանքը դպրոցում, ցույց տալ ուսուցիչների արդյունավետ համագործակցության դրական միտումները:

Հետազոտության խնդիրը: Ձևակերպել մեթոդական միավորման՝ որպես խորհրդակցական մարմնի կառուցվածքն ու հիմնական գործառույթները դպրոցում: Հիմնավորել մեթոդական միավորումների անհրաժեշտությունը դպրոցում:

ԳԼՈՒԽ 1.ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

1.1 Մեթոդական միավորման կառուցվածքն ու գործառույթները

Ժամանակակից աշխարհի առաջընթացի աննախադեպ աճով պայմանավորված՝ կրթական ոլորտը բարեփոխվում ու արդիականացվում է: Ուսուցիչների աշխատանքային գործունեության համար պարտադիր պայման է դառնում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով համալրել իրենց մասնագիտական գործունեությունը: Այս գործընթացում հաջողության հասնելու համար ուսուցչին օգնում է դպրոցում գործունեություն ծավալող մեթոդական միավորումները, որտեղ կոլեկտիվ աշխատանքը ուսուցչի համար ստեղծում է հնարավորություն սովորել, սովորեցնել, ուսումնասիրել, հետազոտել՝ բարձրացնելով իր մասնագիտական որակները:

Մեթոդմիավորումների կազմման հարցում որոշում կայացնողը դպրոցի մանկավարժական խորհուրդն է: Մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում[1]:

Խորհրդի նիստում խորհրդակցական մարմնի անդամները քննարկում են մեթոդական միավորումների կազմման հարցն ու անհրաժեշտության դեպքում ընդունում այն: Աշակերտների թվով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում այդուհետ ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ մոտ կամ հարակից առարկաներից:

[1] .https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:

Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից: Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում[2]:

Այսպիսով, առարկայական մեթոդական միավորումը ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրն է, որն իրականացնում է ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում: Մեթոդական միավորումների թիվը որոշվում է՝ ելնելով ուսումնական հաստատության կողմից հանձնարարված խնդիրների համալիր լուծման անհրաժեշտությունից և հաստատվում դպրոցի տնօրենի հրամանով: Մեթոդական միավորումները ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են դպրոցի տնօրենի կողմից՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի առաջարկությամբ: Մեթոդական միավորումները անմիջականորեն ենթակա են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնային պարտականություններից է՝ ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին[3]:

Կրթության առաջին՝ տարրական օղակը, որպես կանոն, կազմում է իր առարկայական մեթոդական միավորումը. դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում: Միջին և ավագ դպրոցների ուսուցչական կազմն ընդգրկվում է այլ առարկայական ստորաբաժանումներում՝ հումանիտար, բնագիտական, ռազմահայրենասիրական,

[2] Նույն տեղում
[3] Նույն տեղում

ընդհանրական: Առարկայական մեթոդական միավորման նիստերի ընթացքում նախագահը, ով վարում է նիստը, ծանոթացնում է նախօրոք կազմված օրակարգին, որի հաստատման դեպքում, նիստի ընթացքն արձանագրվում է:

Նիստում քննարկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ընդունվում են որոշումներ, որոնք տեղ են գտնում արձանագրության մեջ: (տես՝ հավելված1): Դպրոցի առարկայական մեթոդական միավորումները կարող են անցկացնել նաև ինտեգրված քննարկումներ մի քանի օղակներով: Նիստի ընթացքում կարող են քննարկվել հետևյալ հարցերը.

- քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ:
- քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը:
- քննարկվում է դպրոցում նախատեսվող ուսումնադաստիարակչական միջոցառումների, պետական և այլ նշանակության տոների կազմակերպման ու անցկացման, հիշատակի օրերի, ոգեկոչման արարողությունների կազմակերպան ու անցկացման հարցը:
- քննարկվում է դպրոցում նախատեսվող մրցույթների, վիկտորինաների, ընթերցումների կազմակերպման ու իրականացման հարցը;
- դպրոցում այս կամ այն առարկայի միամյակ հայտարարելու հարցը:
- աշխատանքն արդյունավետ բաժանելու հարցը:
- դպրոցում գործող խորհրդակցական այլ մարմինների հետ համագործակցելու հարցը:
- քննարկվում է սկսնակ ուսուցիչներին մեթոդամանկավարժական ուղղորդում տալու և փորձի փոխանակումն արդյունավետ իրականացնելու հարցը:
- այլ հարցեր:

Մեթոդական միավորման աշխատանքները ղեկավարում է դպրոցի տնօրենի կողմից առաջարկված և մանկավարժական խորհրդի հավանությանն արժանացած ամենափորձառու ուսուցիչներից մեկը, ով աչքի է ընկնում նաև իր մարդկային որակներով, կառավարման փորձով ու մասնագիտական ու մեթոդամանկավարժական գիտելիքներով:

Մեթոդական միավորման աշխատանքներն իրականացվում են ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքային պլանին համապատասխան, պլանը կազմում է մեթոդմիավորման ղեկավարը, քննարկվում մեթոդմիավորման նիստում՝ նախօրոք համաձայնեցնելով մեթոդական գծով փոխտնօրենի հետ: Մեթոդական միավորումների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում են դպրոցի տնօրենը և ուսումնական գծով տնօրենի տեղակալը: Առարկայական մեթոդմիավորի շրջանակներում միավորման համատեղ աշխատանքի ընթացքում ուսումնասիրում, ընդհանրացնում են մանկավարժական առաջավոր փորձը և այդ փորձը ներդնում պրակտիկ աշխատանքում: Այստեղ ուսուցիչները հաղորդակից են դառնում մանկավարժության նորագույն նվաճումներին, որն իրենց ավելի է ոգևորում:

Առարկայական մեթոդական միավորումներն իրենց կատարած մատենավարական աշխատանքներով հաշվետու են ուսումնական գծով փոխտնօրենին: Այդպիսի փաստաթղթերից են.

- մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը:
- մեթոդական միավորման նիստերի արձանագրությունները:
- անցած ուսումնական տարվա աշխատանքի վերլուծությունը:
- առարկայական մեթոդական միավորման անդամների կատարած մեթոդական, ուսումնադաստիարակչական հետազոտությունները:
- փոխադարձ դասալսումների արձանագրությունները:
- իրականացված հանդիպումների, կոնֆերանսների, սեմինարների, կլոր սեղանների հաշվետվությունները:

- ատեստավորում անցած ուսուցիչների հավաստագրերը։
- իրականացրած արտադպրոցական միջոցառումների հաշվետվությունները։
- հաշվետվություն անհրաժեշտ մեթոդական ու դիդակտիկ աջակցության մասին։

Բոլոր մեթոդական միավորումներն իրականացնում են առարկայի վերաբերյալ ժամանակակից ուսուցման հայեցակարգերի ուսումնասիրություններ, վերահսկում դասավանդման արդյունավետությունը՝ օգտագործելով այլընտրանքային միջոցներ, գործիքներ ու դասագրքեր: Եթե մեթոդական աշխատանքը դպրոցում լավ է կազմակերպված, ապա հնարավոր կլինի ընդգծված կերպով բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի որակը:

Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, մանկավարժն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով սովորողի շահը: Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կարողունակությունները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար:

Ուստի ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը:

1.2 Պատմության ուսուցչի մասնակցությունը հաստատության առարկայական մասնախմբի աշխատանքներին

Ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է:

Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ ու համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար:

Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝ նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են,

այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման:Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման[4]:

Ստացվում է, որ կրթության որակ ու մատչելիություն հասկացությունները խիստ համադրելի են, ուստի մեթոդական միավորման անդամ ուսուցիչները ևս պետք է իրենց գործունեության հիմքում դնեն մատչելիությունն ու հասանելիությունը:

Մեթոդական միավորումներն իրենց աշխատանքը պլանավորելիս պետք է հաշվի առնեն կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը: Սովորողը նույնպես որոշակի կերպով, թեկուզ անուղղակի միջամտությամբ կարող է մասնակցել կրթական համակարգի այս կամ այն օղակի աշխատանքներին: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենք ևս սովորողներ են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար[5]:

---

[4] http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ4:

[5] Նույն տեղում, էջ 15:

Աջակցող կրթական միջավայրը կրթական գործընթացի կարևորագույն կողմերից է, որտեղ պետք է գերիշխի փոխադարձ վստահության մթնոլորտը, հարգանքը, ինչն իր հերթին խթան է հանդիսանում ստեղծագործականության և ինքնուրույնության համար: Այն իր հերթին կարևորում է կոլեկտիվ ուսուցումը և ամրապնդում սովորողների միջև հարաբերությունները: Այս տեսանկյունից կարող ենք նկատել, որ սկսնակ ուսուցչին մեթոդական միավորման ներսում ևս կարող ենք դիտարկել որպես «սովորող», ուստի գործընկերների կողմից պետք է ստեղծվի փոխօգնության, աջակցման միջավայր, այլ խոսքով՝ մեթոդական միավորման նախագահն ու փորձառու անդամները պետք է առաջնորդվեն ժողովրդավարական և ոչ-խտրական սկզբունքներով՝ հարգելով բազմազանությունն ու հանդուրժողականությունը:

Եթե փորձենք վերլուծել ուսուցչի անհատական աշխատանքն ու ֆունկցիոնալ պարտականությունները մեթոդական միավորման ներսում, ապա պարզ է դառնում, որ ուսուցիչների զբաղվածությունն ավելանում է աննշան չափով: Այն գործառույթները, որոնք ուսուցիչն իրականացնում է միավորման ներսում, բացառապես նպաստում են վերջինիս մանկավարժական հմտությունների ձեռքբերմանն ու արդյունավետ գործունեություն իրականացնելուն:

Ուսուցչի մասնակցությունը մեթոդական միավորմանը նպաստում է մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը: Մեթոդական աշխատանքների իրականացման հիմնական ձևերից են.

- դասախոսություն, սեմինար, գործնական սեմինար;
- ստեղծագործական բանավեճ;
- հյուրասրահ, կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ;
- գործնական խաղեր, իրավիճակային ուսուցում, դերային խաղեր,առարկայական շաբաթներ;
- մեթոդական մրցույթներ,մեթոդական զեկու ցումներ,մեթոդական գաղափարների տոնավաճառ, մեթոդական վարպետության դասեր;

- բանավեճեր, որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, նախագծեր:
- մանկավարժական մարաթոն, մեթոդական փառատոն(տես՝ հավելված 2)

Չնաչափի ընտրության առումով ոչ մի սահմանափակում չկա: Յուրաքանչյուր մեթոդական միավորման անդամ կարող է հանդես գալ իր առաջարկով՝ բերելով իր նորարարական միտքը:(տես՝ հավելված 3) Մեթոդական միավորման անդամները կարող են ստանալ հատուկ հանձնարարություններ, որոնց արդյունքները կքննարկվեն նիստերի ժամանակ: Նմանօրինակ հանձնարարություններից են.

- դասի մոդելավորում՝ որոշակի մեթոդների կիրառմամբ:
- տրված թեմայով դասերի մշակումներ:
- որոշակի թեմայով հետազոտություններ կատարելու ծրագրերի մշակում:
- ըստ որոշակի թեմայի, պրոբլեմի գրականության ընտրություն:
- ստուգիչ նյութերի, թեստերի կազմում:
- հուշագրերի, դիդակտիկ նյութերի կազմում, պատրաստում:
- առարկայական, արտադասարանական միջոցառումների մշակում և իրականացում:
- այցելություններ դասերի, արտադասարանական միջոցառումների՝ վերլուծություններով:
- տրված թեմայի, խնդրի վերաբերյալ սեփական փորձի ներկայացում:
- աշխատանք՝ ինքնակրթության համար ընտրված թեմայի շուրջ:
- որոշակի պրոբլեմի շուրջ զեկուցման նախապատրաստում:
- ուսումնասիրած թեմայի, խնդրի շուրջ շնորհանդեսի նախապատրաստում:
- սեփական հետազոտությունների շրջանակում ձեռքբերումների ներկայացում:

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում առանձնակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը:

Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Ինչպես վերը նշել էինք՝ մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը: Այս առումով անչափ կարևոր է յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական որակները, Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներից են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն:
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն:
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն:
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն:
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն[6]:

[6]Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

Մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանն իր մեջ ներառում է միավորման աշխատանքի բովանդակությունը, հիմնախնդիրներն ու յուրաքանչյուր անդամի անհատական ու համալիր աշխատանքը:(կազմակերպված աշխատանքի գրավականն է նաև անհատական թղթապանակները,որոնք պետք է ունենան և՛մ/մ նախագահը,և՛մ/մ մասնակից անդամները: (տես՝ հավելված 4)): Պլանում կարող են տեղ գտնել հետևյալ դրույթները.

- առարկայի տեսական և դասավանդման մեթոդիկայի հարցեր:
- մանկավարժությունից և հոգեբանությունից մասնագետների ելույթներ:
- ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում:
- նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում:
- նոր դասագրքերի ուսումնասիրում:
- միջառարկայական կապերի հարցեր:
- տետրերի ստուգման հարցեր:
- մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք:
- սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ:
- նպատակային փոխադարձ դասալսումների, բաց դասերի իրականացում:
- ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների քննարկում:
- սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում և իրականացում:
- քննական նյութի նախապատրաստում:
- ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվությունների ստուգում:
- ցուցահանդեսների, դիդակտիկ նյութերի, զննական միջոցների նախագծում և իրականացում:

- սովորողների ստեղծագործական աշխատանքներ։
- առարկայական արտադասարանական աշխատանքներ։

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում մեծապես նպաստում է կրթության նոր որակի բարձրացմանը և կառուցվում է յուրաքանչյուր անդամի աշխատանքի հիման վրա։ Այս օղակի արդյունավետ աշխատանքի դեպքում ուսումնական հաստատությունում չեն առաջանա ո'չ կարգապահական, ոչ ուսումնական հնարավոր բարդություններ։

Կարծում ենք՝ այս ուսումնասիրությունը դրական ազդեցություն կունենա մեր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում գործընկերային հարաբերություններն էլ ավելի խորացնելու համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի,այդ թվում նաև պատմության, մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների հենքն է, որում կարողունակությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում: Մեր ուսումնասիրության արդյունքում փաստեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար շատ կարևոր է գործընկերների հետ համագործակցությունը առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում:

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը շատ կարևոր է նոր աշխարհում: Ուստի դպրոցի համար կարևոր է կարողունակ ուսուցիչ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները: Վերահաստատենք մեր այն պնդումը, որ առարկայական մեթոդական միավորումներում համակարգված աշխատանքի արդյունքում ուսուցիչը կարող է ունենալ մեծ նվաճումներ, քանի որ միասնական աշխատանքն ուղղված է բոլորի հաղթանակներին, այն է՝ ունենալ բարձր ու նոր որակի ուսումնական գործընթաց:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կազմակերպել քննարկումներ՝ ընդգրկելով կրթության ոլորտի փորձագետներ՝ նպատակ ունենալով նոր կարողություններ զարգացնել սկսնակ ուսուցիչների մոտ:

- Արդյունավետ կազմակերպել այն գործընթացը, որ մեթոդական միավորման անդամներից ամեն մեկն ունենա իր կոնկրետ պարտավորությունները:

- Տարբեր հանրակրթական դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ ստեղծել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:

2. http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում:

3. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012 «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»

4. Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Մարինե Մանուկյան «Մեթոդական աշխատանքը դպրոցում»:

5. Ս.Տ.Վարդումյան «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ»

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.



ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԹԵՐԹ

Մեթոդմիավորման հրահանգավորված նիստերի արձանագրություն թիվ՝ _____

Անցկացման ամսաթիվը՝ " ___ " _____

Նիստի թեման՝ _____

Քննարկվող հարցերը՝ _____

1. _____
2. _____
3. _____

Նիստերի վարման ընթացքը

1. *Լսեցին՝* _____

Որոշեցին՝ _____

2. *Լսեցին՝* _____

Որոշեցին՝ _____

Հավելված 2.

2.3.3. Մեթոդմիավորման գործունեության նպատակը, խնդիրները և ուղղությունները

Մեթոդմիավորման գործունեության հիմնական նպատակը մանկավարժական կադրերի մասնագիտական կրթության և անընդմեջ մեթոդական ուսումնառության ապահովումն է միասնական որոնողական աշխատանքների միջոցով:

Նպատակն իրագործելու համար իրականացվում են աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Ուսումնադաստիարակչական գործունեություն.
2. Ուսումնամեթոդական գործունեություն.
3. Կազմակերպական-մեթոդական գործունեություն.
4. Տեղեկատվական-վերլուծական գործունեություն.
5. Խորհրդատվական գործունեություն.
6. Հայտորոշիչ գործունեություն.
7. Խմբագրական-հրատարակչական գործունեություն.
8. Փորձարարական-նորարարական գործունեություն.
9. Գիտամեթոդական գործունեություն:

Պետք է հիշել, որ սկզբում առաջադրվում է նպատակը, որի իրագործման համար հարկ է լինում լուծել մի շարք խնդիրներ: Դրանք ձևակերպվում են *ստեղծել, պատրաստել, իրագործել* և այլ նմանօրինակ բայերով և լուծվում տարատեսակ աշխատանքների միջոցով:

Հավելված 3

Ինվարիանտ 10. Անհրաժեշտ է վերջ տալ սխոլաստիկային (ձեւականությանը): Սխոլաստիկան դպրոցի աշխատանքների եւ կյանքի կանոնների համակարգ է, որը նրանից (դպրոցից) դուրս չունի ոչ մի արժեք, քանի որ դպրոցն ի վիճակի չէ երեխաներին պատրաստել իսկական կյանքի բազմազանությանը:

Առաջարկում են ձեզ սխոլաստիկայի ճանաչման պարզ միջոց: Եթե դուք ուզում ենք իմանալ, թե ինչքան է սխոլաստիկ այս կամ այն աշխատանքի ձեւը եւ ինչ գույնով, հետեւաբար, կարմիր թե դեղին այն պետք է նշել՝ հետեւյալ հարցերը տվեք ձեզ.

Եթե ես պետք է անեի այդ գործը՝ կանեի՞ հաճույքով եւ արդյունավետությամբ:

Եթե ես լինեի այդ աշակերտի փոխարեն՝ կաշխատեի՞ մեծ ջանասիրությամբ եւ եռանդով:

Եթե ես դասարանի դուռը թողնեի բաց եւ երեխաները կարողանային կատարելապես ազատ դուրս գալ դասարանից, ապա երեխաները կշարունակեի՞ն իրենց աշխատանքը կամ կփախչեի՞ն, որպեսզի զբաղվեն ինչ-որ բանով:

ԹԵՍՏ

Ձեր կազմակերպած ուսումնական աշխատանքը այնպես հետաքրքիր է, այնպես է գրավում աշակերտներին եւ ուսուցիչներին, որ նրանք դրանով զբաղվում են ազատ ժամերին՝ չնկատելով, թե ինչպես է թռչում ժամանակը:

Կանաչ

Դուք աշխատում եք ուսումնական պարապմունքի մեջ մտցնել նորի տարրեր, սակայն ժամանակակից դպրոցի եւ հասարակության պայմաններում դուք չեք կարող ամբողջովին հրաժարվել սխոլաստիկ մեթոդներից:

Դեղին

Դուք ընդունում եք միայն ավանդական սխոլաստիկ պարապմունքները:

Կարմիր

Ինվարիանտ 13. Դիտելիքները ձեռք են բերվում փորձերի ուղիով,բայց ոչ կանոնների ու օրենքների ուսումնասիրությամբ, ինչպես մտածում են: Առաջին հերթին սկսել կանոններից եւ օրենքներից՝ նույնն է, թե սայլը դնել ձիերից առաջ:

Կանոններն ու օրենքները՝ փորձի պտուղ են, այլ կերպ դրանք միայն անիմաստ եւ անօգուտ ֆորմուլաներ են:

ԹԵՍՏ

Դուք կազմակերպում եք կենդանի փորձարարական աշխատանք հետեւյալ սկզբունքով.«միայն զնդանի մոտ են դարբին դառնում»:

կանաչ

Դուք համատեղում եք այդպիսի աշխատանքը կանոնների ուսումնասիրությանը զուտ հույսերով, որ դրանք կարող է պետք գան:

դեղին

Դուք կողմ եք դասական ուսուցմանը՝ հիմնված կանոնների եւ օրենքների անգիր սերտման վրա:

կարմիր

242

Հավելված 4



ՈՒՍՈՒՑՉԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ

Ուսուցիչը կրթական գործընթացի բարեփոխումների իրականացման կազմակերպիչն ու պատասխանատուն է: Ուսուցչից պահանջվում է աշխատանքների հմուտ պլանավորում և նախագծային գործունեություն: Չկա մի գործիք, որով հնարավոր լիներ չափել ուսուցչի աշխատանքի խորությունը, ստեղծագործական աշխատանքների որակը: Փորձառության արդյունքում է ձևավորվում վարպետ ուսուցիչը, որի գործունեության գնահատման, ինչպես նաև ինքնագնահատման լավագույն միջոց է նրա աշխատանքային թղթապանակը: Այուս կողմից էլ՝ ուսուցիչը պետք է ունենա արձանագրման որևէ ձև, որտեղ կարտացոլվեն նրա մասնագիտական գործունեության արդյունքները:

Թղթապանակն ուսուցչի մասնագիտական մակարդակի աճի, ձեռքբերումների, նվաճումների, հետազոտությունների իրազեկման մի ձև է: Այս հավաքական փաստաթուղթը ցույց է տալիս ուսուցչի պատրաստվածության մակարդակը, ակտիվության աստիճանը և՛ ուսումնական, և՛ արտադասարանական գործունեության բնագավառներում:

Թղթապանակի գործադրման հիմնական նպատակը ուսուցչի մասնագիտական աճի, հաջողությունների վերլուծությունն ու արձանագրումն է: Այն հնարավորություն է տալիս՝

ա) հաշվարկել արդյունքները, որոնց հասել է ուսուցիչը գործունեության տարբեր ձևերում՝ կրթական, դաստիարակչական, ստեղծագործական, ինքնակրթության,

բ) վերլուծել, ընդհանրացնել և համակարգել աշխատանքները,

գ) օբյեկտիվորեն գնահատել սեփական հնարավորությունները,

դ) պլանավորել աշխատանքները,

ե) մշակել նոր ծրագրեր:

Թղթապանակը ուսուցչի գործունեության գնահատման այլընտրանքային տարբերակ է: Թղթապանակի միջոցով հնարավոր է՝

ա) բարձրացնել ուսուցչի որակավորումը,

բ) բացահայտել մասնագիտական առաջընթացը և վարպետությունը,

գ) գնահատել վարպետությունը և փորձարարական գործունեությունը: